ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«29» Մարտ 2024թ.

ՀՐԱՄԱՆ N 187-Հ

«ԼՅՈՒՖԹՀԱՆԶԱ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշմամբ հաստատված հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի օգոստոսի 3-ի N 401-Ա հրամանը և «Լյուֆթհանզա գերմանական ավիաուղիներ» ավիաընկերության 2024 թվականի փետրվարի 2-ի հայտը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. «Լյուֆթհանզա գերմանական ավիաուղիներ» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/ երթուղով՝ 2024 թվականի մարտի 31-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 5 (հինգ) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և

տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի օգոստոսի 3-ի N 401-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածում՝ 2024 թվականի մարտի 31-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 26-ը՝ շաբաթական 5 (հինգ) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշմամբ հաստատված հավելվածով նախատեսված պայմանների, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2021 թվականի օգոստոսի 3-ի N 401-Ա հրամանով տրամադրված արտոնությունը՝ մինչև 2024 թվականի հուլիսի 30-ը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

Recoverable Signature

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 074/2024
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 074/2024
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Լյուֆթհանզա գերմանական ավիաուղիներ» «Lufthansa German Airlines»
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A319-112, A319-114, A320-211, A320-214, A320-271N, A321-131, A321-231, A321-271NX
Հաճախականությունը Frequency	Շաբաթական 5 չվերթ 5 flights per week
Երթուղին Air route	Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/ Frankfurt/EDDF/-Yerevan/UDYZ/-Frankfurt/EDDF/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	31/03/2024 մինչև 26/10/2024 31/03/2024 till 26/10/2024

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

Removable Signature

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

29.03.2024
(տալու ամսաթիվը)
(date of issue)